ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 356-Ա

« 05 » ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024Թ

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԽՆՁՈՐՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՀԱՄԼԵՏ ՕՀԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-մասի 4-րդ կետի, «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի 19-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Խնձորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 48-րդ կետի 11-րդ, 19-րդ և 22-րդ ենթակետերը, 49-րդ կետը, մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում մշտադիտարկումներ իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի անդամների կողմից 2024 թվականի հոկտեմբերի 15-ին «ՀՀ Վայոց ձորի մարզի Խնձորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ կատարված աշխատանքային այցի մասին զեկուցագրերը և հաշվի առնելով, որ ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 01/15/6711-2024 գրությամբ տրված ողջամիտ ժամկետում Հ. Օհանյանը չի ներկայացրել գրավոր բացատրություն՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ, 95-րդ, 99-րդ և 159-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1223-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, ՀՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 79-Ն հրամանով հաստատված հավելվածի պահանջները չպահպանելու, դպրոցի աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ անհրաժեշտ վերահսկողություն չիրականացնելու, կրթական ծրագրերը պատշաճ ձևով

չիրականացնելու, կրթական գործընթացը ճիշտ չկազմակերպելու համար «ՀՀ Վայոց ձորի մարզի Խնձորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Համլետ Օհանյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հ. Օհանյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

բ. Եղեգնաձոր